Շուկայական ռիսկը Բանկը կառավարում է սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքի ժամկետայնության և արտարժութային դիրքերի գծով, սահմանվում են նաև «վնասի դադարեցման» սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, վերանայվում և հաստատվում են ԱՊԿՀ-ի կողմից:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

## *Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն*

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Դեկտեմբերի 31, 2013թ.** | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 1,195,711 | - | - | - | - | 1,195,711 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 30,258 | 48,446 | - | 3,347,383 | - | 3,426,087 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 1,840,759 | 3,074,696 | - | - | - | 4,915,455 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,240,362 | 1,228,815 | 1,943,693 | 14,688,649 | 5,003,641 | 24,105,160 |
| | 4,307,091 | 4,351,957 | 1,943,693 | 18,036,032 | 5,003,641 | 33,642,413 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 735,498 | 823 | 677,448 | 1,025,759 | - | 2,439,529 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 750,641 | - | - | - | - | 750,641 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 10,845,726 | 3,033,905 | 6,314,175 | 3,014,766 | 42,090 | 23,250,660 |
| Այլ ներգրավումներ | 4,854,459 | 19,150 | 41,614 | 454,849 | 471,091 | 5,841,163 |
| | 17,186,325 | 3,053,878 | 7,033,236 | 4,495,374 | 513,180 | 32,281,993 |
| **Տարբերություն** | (12,879,234) | 1,298,078 | (5,089,543) | 13,540,658 | 4,490,461 | 1,360,420 |

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Դեկտեմբերի 31, 2012թ.** | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,022,992 | - | - | - | - | 3,022,992 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 26,090 | 36,692 | - | 2,199,568 | 496,694 | 2,759,044 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 1,482,550 | 8,567,432 | 2,017,461 | - | - | 12,067,443 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,628,211 | 1,749,822 | 2,050,251 | 13,867,739 | 4,068,323 | 23,364,346 |
| | 6,159,843 | 10,353,946 | 4,067,712 | 16,067,307 | 4,565,017 | 41,213,825 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 779,374 | 4,187,104 | 716,759 | 2,379,399 | - | 8,062,636 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 561,648 | - | - | - | - | 561,648 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 10,387,119 | 4,339,414 | 5,967,931 | 2,765,792 | 60,085 | 23,520,341 |
| Այլ ներգրավումներ | 5,249,604 | 12,483 | 27,157 | 270,542 | 337,446 | 5,897,232 |
| | 16,977,745 | 8,539,001 | 6,711,847 | 5,415,733 | 397,531 | 38,041,857 |
| **Տարբերություն** | (10,817,902) | 1,814,945 | (2,644,135) | 10,651,574 | 4,167,486 | 3,171,968 |

### *Միջին տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | Դեկտեմբերի 31, 2012թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Նոստրո հաշիվներ բանկերում | - | - | - | - | 1.6% | - |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 14.0% | - | - | 14.6% | - | - |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | - | 8.2% | - | - | 8.4% | - |
| Հաճախորդներին տրված վարկեր | 14.9% | 10.6% | 10.4% | 14.7% | 10.6% | 10.5% |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 8.8% | 8.9% | - | 8.7% | 6.8% | - |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 7.8% | - | - | 8.0% | - | - |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 2.6% | 2.0% | 0.3% | 1.8% | 1.9% | 0.6% |
| - Ժամկետային ավանդներ | 10.1% | 5.9% | 1.4% | 11.2% | 6.4% | 3.3% |
| Այլ ներգրավումներ | 8.7% | 6.4% | 6.7% | 10.8% | 6.6% | - |

### *Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով:

Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2013թ. դեկտեմբերի 31-ի ու 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ նվազում | 53,538 | 48,101 |
| 100 բկ զուգահեռ աճ | (53,538) | (48,101) |

Ստորև ներկայացվում է շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2013թ. դեկտեմբերի 31-ի ու 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. | | Դեկտեմբերի 31, 2012թ. | |
|---|---|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ | Շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ |
| 100 բկ զուգահեռ նվազում | - | 65,112 | - | 61,094 |
| 100 բկ զուգահեռ աճ | - | (65,112) | - | (61,094) |

## *(ii) Արտարժույթի ռիսկ*

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Բանկը չի հեջավորում իր ենթարկվածությունը արտարժույթի ռիսկին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,525,818 | 764,121 | 71,029 | 4,360,968 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 4,970,012 | - | - | 4,970,012 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 17,178,862 | 192,728 | - | 17,371,590 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 2,081 | 358 | - | 2,439 |
| **Ընդամենն ակտիվներ** | **25,676,773** | **957,207** | **71,029** | **26,705,009** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 2,076,500 | 279 | 2 | 2,076,781 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 20,082,479 | 964,640 | 23,600 | 21,070,719 |
| Այլ ներգրավումներ | 4,827,544 | - | - | 4,827,544 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 33,385 | 634 | 1,244 | 35,263 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **27,019,908** | **965,553** | **24,846** | **28,010,307** |
| **Զուտ դիրքը** | **(1,343,135)** | **(8,346)** | **46,183** | **(1,305,298)** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ԱՄՆ դոլար<br>հազ. դրամ | Եվրո<br>հազ. դրամ | Այլ արտարժույթ<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,482,071 | 1,002,582 | 18,722 | 4,503,375 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 12,121,722 | - | - | 12,121,722 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 16,676,692 | 139,195 | - | 16,815,887 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 4,860 | 1,658 | 1 | 6,519 |
| **Ընդամենն ակտիվներ** | **32,285,345** | **1,143,435** | **18,723** | **33,447,503** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7,598,622 | 266 | 2 | 7,598,890 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 20,785,435 | 1,120,099 | 7,506 | 21,913,040 |
| Այլ ներգրավումներ | 4,355,079 | - | - | 4,355,079 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 81,927 | 35,119 | 3,416 | 120,462 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **32,821,063** | **1,155,484** | **10,924** | **33,987,471** |
| **Զուտ դիրքը** | **(535,718)** | **(12,049)** | **7,799** | **(539,968)** |

2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | Դեկտեմբերի 31, 2013թ.<br>հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ | (134,314) | (42,857) |
| Եվրոյի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ | (835) | (964) |

2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար):

Իրավաբանական անձանց կողմից ներկայացվող վարկային դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից, վարչությունը պատասխանատու է Բանկի առևտրային վարկերի պորտֆելի համար: Այս վարչության վարկային վերլուծաբանների կողմից պատրաստված հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և գործունեության ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի

կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Կառավարման հանձնաժողովն ուսումնասիրում է վարկի դիմումը Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Կառավարման հանձնաժողովի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կամ անկախ գնահատողի, կամ Բանկի մասնագետների կողմից:

Անհատների կողմից ներկայացվող վարկային դիմումները ուսումնասիրվում են Մանրածախ վարկերի հաստատման բաժնի, Մանրածախ վարկերի հաստատման կոմիտեի և Կառավարման հանձնաժողովի կողմից՝ ելնելով վավերացված սահմանաչափերից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8,327,826 | 8,971,211 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 3,439,247 | 2,772,204 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 5,110,012 | 12,291,540 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 24,105,161 | 23,364,346 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 86,295 | 70,240 |
| **Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը** | **41,068,541** | **47,469,541** |

Բանկը որպես հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավ ընդունում է անշարժ գույք, այլ գրանցված արժեթղթերը ակտիվների գծով և երաշխիքները: Իրական արժեքի գնահատումները հիմնվում են վարկի տրամադրման պահին գրավի հաշվարկված արժեքի վրա և սովորաբար չեն վերանայվում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկը գնահատվում է որպես արժեզրկված անհատական հիմունքով:

Սովորաբար գրավ չի պահանջվում արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխառությունների դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ պայմանագրային կողմ (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ մեկ), որի հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է առավելագույն վարկային ռիսկի 10%-ը: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս գումարը կազմում է 7,131,972 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ 5,453,378 հազար դրամ):

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿՀ-ի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական անձանց և անհատների վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից ու փոխառություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿՀ-ն՝ Ռիսկերի կառավարման բաժնի և Գանձապետարանի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:
Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխառության պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ընդհանուր համախառն ներհոսքը և արտահոսքն իրենցից ներկայացնում են դրամական միջոցների չզեղչված հոսքերը ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ պարտավորվածությունների գծով: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխիքը կարող է հետ գնվել:
Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Դեկտեմբերի 31, 2013թ.** | | | | | | | |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 10,368 | 738,820 | 850 | 721,194 | 1,191,453 | 2,662,684 | 2,439,877 |
| Հետգնման պայմանագրի գծով վճարվելիք գումարներ | 751,923 | - | - | - | - | 751,923 | 750,641 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,404,792 | 5,642,013 | 3,094,604 | 6,641,789 | 3,594,480 | 25,377,678 | 24,388,803 |
| Այլ ներգրավումներ | 4,834,137 | 22,592 | 42,150 | 100,174 | 1,773,336 | 6,772,390 | 5,841,164 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 121,282 | - | - | - | - | 121,282 | 121,282 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,122,503** | **6,403,426** | **3,137,604** | **7,463,157** | **6,559,269** | **35,685,957** | **33,541,767** |
| **Փոխառության պարտավորվածութ.** | **1,430,790** | **-** | **-** | **-** | **-** | **1,430,790** | **1,430,790** |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Դեկտեմբերի 31, 2012թ.** | | | | | | | |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 18,253 | 774,838 | 4,270,983 | 762,923 | 2,817,705 | 8,644,702 | 8,062,970 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 562,755 | - | - | - | - | 562,755 | 561,648 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,866,239 | 5,003,239 | 4,429,666 | 6,269,031 | 3,529,633 | 26,097,808 | 24,945,995 |
| Այլ ներգրավումներ | 4,558,478 | 711,492 | 12,944 | 29,063 | 879,582 | 6,191,559 | 5,897,232 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 68,346 | 102,819 | - | 40,743 | - | 211,908 | 211,908 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 12,074,071 | 6,592,388 | 8,713,593 | 7,101,760 | 7,226,920 | 41,708,732 | 39,679,753 |
| **Փոխառության պարտավորվածութ.** | 1,601,130 | - | - | - | - | 1,601,130 | 1,601,130 |

ՀՀ օրենսդրության համաձայն անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ մարման ժամկետների: Ստորև ներկայացված են այս ավանդների հիմնական գումարները՝ ըստ մարման ժամկետների 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

- մինչև 1 ամիս – 1,943,629 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.-ին՝ 1,831,829 հազար դրամ)
- 1-ից 3 ամիս – 3,677,840 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.-ին՝ 3,010,208 հազար դրամ)
- 3-ից 6 ամիս – 2,809,577 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.-ին՝ 3,415,396 հազար դրամ)
- 6-ից 12 ամիս – 5,350,235 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.-ին՝ 5,210,434 հազար դրամ)
- ավելի քան 1 տարի –3,056,312 հազար դրամ (31 դեկտեմբերի 2012թ.-ին՝ 2,823,208 հազար դրամ)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3 ամսից 1 տարի | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8,327,826 | - | - | - | - | - | - | 8,327,826 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | - | 30,258 | 48,446 | 3,347,383 | - | 13,160 | - | 3,439,247 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 623,958 | 1,216,801 | 3,074,696 | - | - | 194,557 | - | 5,110,012 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 366,645 | 873,717 | 3,172,508 | 12,703,198 | 5,003,641 | - | 1,985,451 | 24,105,160 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 1,072,720 | - | 1,072,720 |
| Այլ ակտիվներ | 59,615 | - | 139,881 | 361,069 | - | - | - | 560,565 |
| **Ընդամենը ակտիվներ** | **9,378,044** | **2,120,777** | **6,435,531** | **16,411,650** | **5,003,641** | **1,280,437** | **1,985,451** | **42,615,530** |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 10,368 | 725,478 | 678,271 | 1,025,759 | - | - | - | 2,439,876 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 750,641 | - | - | - | - | - | - | 750,641 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,399,301 | 5,584,567 | 9,348,079 | 3,014,766 | 42,090 | - | - | 24,388,802 |
| Այլ ներգրավումներ | 4,834,124 | 20,335 | 60,764 | 454,849 | 471,091 | - | - | 5,841,163 |
| Այլ պարտավորություններ | 167,546 | 1,895 | 7,850 | 4,935 | 7,121 | - | - | 189,347 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | - | - | - | 26,525 | - | 26,525 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,161,980** | **6,332,275** | **10,094,965** | **4,500,309** | **520,301** | **26,525** | **-** | **33,636,354** |
| **Զուտ դիրքը** | **(2,783,936)** | **(4,211,498)** | **(3,659,434)** | **11,911,341** | **4,483,340** | **1,253,912** | **1,985,451** | **8,979,175** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3 ամսից 1 տարի | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8,971,211 | - | - | - | - | - | - | 8,971,211 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | - | 26,090 | 36,692 | 2,199,568 | 496,694 | 13,160 | - | 2,772,204 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 1,482,550 | - | 10,584,893 | - | - | 224,097 | - | 12,291,540 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 551,843 | 1,076,368 | 3,800,073 | 13,143,963 | 4,068,323 | - | 723,776 | 23,364,346 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 1,120,249 | - | 1,120,249 |
| Այլ ակտիվներ | 59,558 | 11,596 | 44,724 | 304,139 | - | 3,717 | - | 423,734 |
| **Ընդամենը ակտիվներ** | **11,065,162** | **1,114,054** | **14,466,382** | **15,647,670** | **4,565,017** | **1,361,223** | **723,776** | **48,943,284** |
| | | | | | | | | |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 18,232 | 761,476 | 4,903,863 | 2,379,399 | - | - | - | 8,062,970 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 561,648 | - | - | - | - | - | - | 561,648 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 6,860,443 | 4,951,536 | 10,308,139 | 2,765,792 | 60,085 | - | - | 24,945,995 |
| Այլ ներգրավումներ | 4,556,420 | 693,184 | 39,640 | 270,542 | 337,446 | - | - | 5,897,232 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | - | - | - | 66,194 | - | 66,194 |
| Այլ պարտավորություններ | 97,766 | 104,779 | 50,889 | 13,087 | 7,361 | - | - | 273,882 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **12,094,509** | **6,510,975** | **15,302,531** | **5,428,820** | **404,892** | **66,194** | | **39,807,921** |
| **Զուտ դիրքը** | **(1,029,347)** | **(5,396,921)** | **(836,149)** | **10,218,850** | **4,160,125** | **1,295,029** | **723,776** | **9,135,363** |

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական միջոցը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության որոշումն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, նոստրո հաշիվները, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը 2013թ. դեկտեմբեր ամսվա համար և այդ ամսաթվին ավարտված տարվա ընթացքում:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. | Դեկտեմբերի 31, 2012թ. |
|---|---|---|
| Հաշվետու ամսվա համար | 251.54% | 267.3% |
| Միջինը ժամանակահատվածի համար | 223.0% | 236.6% |
| Առավելագույնը ժամանակահատվածի համար | 276.0% | 276.8% |
| Նվազագույնը ժամանակահատվածի համար | 179.1% | 181.0% |

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար:

# 25 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային հաստատությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2013թ. և 2012թ. ընթացքում Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ հազ. դրամ |
|---|---|---|
| **Հիմնական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 8,125,100 | 8,125,100 |
| Էմիսիոն եկամուտ | 257,149 | 257,149 |
| Գլխավոր պահուստ | 51,292 | 41,684 |
| Չբաշխված շահույթ | 430,482 | 442,679 |
| Նվազեցումներ | (401,747) | (34,850) |
| **Ընդամենը հիմնական կապիտալ** | *8,462,276* | 8,831,762 |
| **Լրացուցիչ կապիտալ** | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | 241,266 | 48,227 |
| **Ընդամենը լրացուցիչ կապիտալ** | *241,266* | 48,227 |
| **Ընդամենը կապիտալ** | 8,703,542 | 8,879,989 |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ** | 37,968,598 | 44,155,280 |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն** | 22.92% | 20.1% |
| **Ընդամենը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն** | 22.29% | 20.0% |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները` հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար` որոշակի ճշգրտումներով` հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

# 26 Պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրում:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Փոխառությունների գծով պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ | 1,142,960 | 1,397,459 |
| Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ | 183,158 | 182,607 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 104,672 | 21,064 |
| | 1,430,790 | 1,601,130 |

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պարտավորվածություններից 866,690 հազար դրամ գումարով պարտավորվածությունները (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ 1,140,759 հազար դրամ) վերաբերում են հինգ հաճախորդի (2012թ. դեկտեմբերի 31-ին՝ չորս հաճախորդի): Սա վկայում է էական վարկային ռիսկի առկայության մասին:

# 27 Պայմանական դեպքեր

## (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ապահովագրված է մինչև 500 միլիոն դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից: Բանկն ապահովագրել է նաև դրամարկղերը 90 միլիոն դրամի չափով՝ ֆիզիկական վնասից և գողությունից:

## (բ) Իրավական պարտավորություններ

Ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

## (գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

# 28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

## (ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 65%-ը: Մայր կազմակերպությունը ներկայացնում է հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ: Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Ֆրանսուա Բասիլը:

## (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին | 272,282 | 283,366 |

Այս գումարները նաև ներառում են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին տոկոսադրույքները:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին** | | | | |
| Տրված վարկեր (համախառն) | 242,701 | 9.5% | 176,754 | 9.7% |
| Վարկերի արժեզրկման պահուստ | (2,352) | | (2,270) | - |
| Ստացված ավանդներ | 331,483 | 5.4% | 436,437 | 7.3% |

Կապակցված կողմերին վարկերը տրվում են ՀՀ դրամով և ենթակա են մարման 1-ից 15 տարվա ընթացքում` կախված վարկի տեսակից: Վարկերն ապահովված են համապատասխան տեսակի գրավով, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 16-ի (գ) կետի (ii) ենթակետում:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | Դեկտեմբերի 31, 2013թ. հազ. դրամ | Դեկտեմբերի 31, 2012թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 23,013 | 13,331 |
| Տոկոսային ծախս | (26,081) | (31,507) |
| Արժեզրկումից (կորուստներ) / հակադարձում | (82) | (2,270) |

## (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են մայր կազմակերպությունը, նրա այլ դուստր կազմակերպությունները և չվերահսկող բաժնետերերին: Ստորև ներկայացված են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթում կամ վնասում արտացոլված գործարների գումարները:

| | **Մայր կազմակերպություն** | | **Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն** | | **Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ** | | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **Միջին տոկոսադր., %** | **հազ. դրամ** | **Միջին տոկոսադր., %** | **հազ. դրամ** | **Միջին տոկոսադր., %** | **հազ. դրամ** |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 54,099 | 0.1% | - | - | 19,488 | 0.1% | 73,587 |
| - Եվրոյով | 73,373 | - | - | - | 6,492 | - | 79,865 |
| - այլ արտարժույթով | 5,529 | - | - | - | - | - | 5,529 |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | | | | | | | |
| - ՀՀ դրամով | 40 | - | - | - | - | - | 40 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 2,076,446 | 8.9% | - | - | - | - | 2,076,446 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | - | - | 1,825,082 | 6.0% | 1,825,082 |
| Այլ ներգրավումներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | 1,894,914 | 7.0% | - | - | 1,894,914 |
| Այլ պարտավորություններ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | - | | - | - | - |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 16 | - | - | | - | | 16 |
| Տոկոսային ծախս | (241,008) | - | (192,545) | | (104,878) | - | (538,431) |
| Միջնորդավճարների գծով ծախս | (4,475) | - | - | | - | - | (4,475) |

Ստորև ներկայացված են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

| | Մայր կազմակերպություն | | Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն | | Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին տոկոսադր., % | հազ. դրամ | Միջին տոկոսադր., % | հազ. դրամ | Միջին տոկոսադր., % | հազ. դրամ |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 140,846 | 0.1% | - | - | 109,723 | - | 250,569 |
| - Եվրոյով | 35,011 | - | - | - | 149,345 | - | 184,356 |
| - այլ արտարժույթով | 1,763 | 0.2% | - | - | - | - | 1,763 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 3,443,242 | 8.9% | - | - | - | - | 3,443,242 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | - | - | 1,723,540 | 6.4% | 1,723,540 |
| Այլ ներգրավումներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | 3,141,884 | 7.0% | - | - | 3,141,884 |
| Այլ պարտավորություններ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 80,716 | - | - | - | - | - | 80,716 |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 376 | | - | | - | | 376 |
| Տոկոսային ծախս | (341,181) | | (263,642) | | (93,394) | | (698,217) |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 10 | | - | | - | | 10 |
| Միջնորդավճարների գծով ծախս | (4,244) | | - | | (207) | | (4,451) |
| Այլ գործառնական ծախս | - | | (55) | | - | | (55) |
| Մասնագիտական ծառայություններ | (80,411) | | - | | - | | (80,411) |

Կապակցված կողմերի դրամական միջոցները և դրանց համարժեքները գրավով ապահոված չեն:

# 29 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

## (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 14-ում, 13,160 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի տվյալներ, և այլ գնահատման մոդելներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը հիմնվել է հետևյալ ենթադրությունների վրա.

- 8% և 11%-15% զեղչերը կիրառվում են համապատասխանաբար բանկերին տրված վարկերից և փոխառություններից և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:
- 4%-11% զեղչերը կիրառվում են պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ և «անկախ կողմերի միջև գործարքում»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման արժեք՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

## (բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. Նույն գործիքների համար գործող շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. Գնահատման տեխնիկա, որը հիմնված է դիտարկելի ելակետային տվյալների վրա՝ կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար գործող շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ այլ գնահատման տեխնիկա, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. Գնահատման տեխնիկա, որը կիրառում է նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | - | 3,426,087 | - | 3,426,087 |
| | - | 3,426,087 | - | 3,426,087 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | - | 2,759,044 | - | 2,759,044 |
| | - | 2,759,044 | - | 2,759,044 |